«Դիմակայուն Սյունիք թիմ Եվրոպա նախաձեռնություն»

R2D Սյունիք՝ Սյունիքի վերականգնման, դիմակայունության և զարգացման ծրագիր
NDIC-GEO-NEAR/2022/440-450

Բաղադրիչ 1
Սյունիքի մարզում մասնավոր հատվածի զարգացում

R2D Սյունիք ծրագիր / Արդյունք 1

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ
Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանն աջակցող կազմակերպություններ

Երևան, ՀՀ
2026

1. Ներածություն

Սույն փաստաթուղթը տեղեկատվական ուղեցույց է այն կազմակերպությունների համար, որոնք հետաքրքրված են մասնակցելու Սյունիքի մարզում գործող մասնավոր հատվածի աջակցության ծրագրին՝ ներկայացնելով հայտադիմում փոքր և միջին ձեռնարկություններին աջակցելու համար: Այն մշակվել է Գործողության նկարագրությանը (ԳՆ, 2023) համահունչ, ինչպես նաև համաձայնեցվել է ԱԶԳ-ի և ԵՄ-ի կողմից, և ներկայացված է Շուկայի համակարգի վերլուծության զեկույցում (2023–2024)

R2D Սյունիք ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԵՄ-ի և համաֆինանսավորվում Ավստրիական զարգացման համագործակցության (ԱԶՀ) կողմից, և իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) կողմից, մեկնարկել է 2023-ի սկզբին: Ծրագիրն իրականացվում է ԱԶԳ-ի կողմից՝ որպես Դիմակայուն Սյունիք թիմ Եվրոպա նախաձեռնության մաս, համաձայնվեցված Արևելյան գործընկերության 2021-2027թթ. շրջանակային ռազմավարության և ԵՄ պատվիրակության 2021թ. տարեկան գործողությունների ծրագրի հետ: «Վերականգնում, դիմակայունություն և զարգացում Սյունիքի համար» անվամբ ծրագիրի (R2D Սյունիք) ընդհանուր տևեղությունը 60 ամիս է:

R2D Սյունիք ծրագրի ընդհանուր նպատակը Սյունիքում միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) և կայուն փոքրածավալ համայնքային ենթակառուցվածքների վերականգնման և ճկունության բարձրացումն է:

Արդյունք 1-ը ունի հետևյալ կենտրոնացումը.

I. Բարելավել ՄՓՄՁ-ների և սկսնակ ձեռնարկությունների (ստարտափ) հասանելիությունը գիտելիքներին, տեխնոլոգիաներին, ծառայություններին, շուկաներին և ֆինանսներին.

Ծրագիրը տրամադրում ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցություն գործող բիզնեսներին և նորաստեղծ ձեռնարկություններին: Նաեւ խրախուսում այնպիսի բիզնես ծառայությունների տրամադրումը, որոնք ապահովում են տեղում գործող կազմակերպությունների և գործընկերների կողմից ծրագրի ընթացքում:

II. Մարդկային կապիտալի զարգացում.

Ծրագիրը նպատակն է աջակցել բիզնեսներին, ձեռնարկատերերին և աշխատողներին կարողությունների զարգացման միջոցառումների և գործընկերային աջակցության միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվում կանանց, երիտասարդների և սոցիալապես խոցելի խմբերի կարիքներին՝ նրանց ակտիվ մասնակցությունը բիզնես միջավայրում ապահովելու համար: R2D Սյունիք ծրագիրը աշխատում այն ոլորտներում և շուկաներում, որոնք ընտրվել են 2023թ. դեկտեմբերից մինչև 2024թ. փետրվար անցկացված գնահատման արդյունքներով:[1]

[1] Inclusive Market System Analysis of the Private Business Sector in Syunik, Armenia including Environmental, Gender, and Social Impact Assessment (EGSIA) and Capacity Development Needs Assessment", 2024

2. Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանն աջակցող կազմակերպությունների համար հայտադիմումների ընդունման հրավերի նպատակը

Այս հայտարարության նպատակն է աջակցել այն կազմակերպություններին, որոնք Սյունիքի մարզում նպաստում են գյուղատնտեսության (բացի առաջնային արտադրությունից), արդյունաբերության և զբոսաշրջության ոլորտներում գործող ՓՄՁ-ների զարգացմանը: Ծրագիրը կօգնի ուժեղացնել այս կազմակերպությունների կարողությունները, հասանելի դարձնել անհրաժեշտ ծառայությունները մասնավոր հատվածի համար, և միաժամանակ նպաստել տարածաշրջանի տնտեսական առաջընթացին, կյանքի որակի բարելավմանը և խոցելի խմբերի ընդգրկմանը՝ պահպանելով գենդերային հավասարության սկզբունքը:

Հայտադիմումների ընդունման այս գործընթացի և աջակցող կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով R2D Սյունիք ծրագիրը ձգտում է հասնել իր սահմանված նպատակներին և արդյունքներին, ինչպես նշված է ծրագրի շրջանակային փաստաթղթում:

3. Դիմորդ կազմակերպություններ

Սույն հրավերին կարող են դիմել այն կազմակերպությունները, որոնք Սյունիքի մարզում **կառաջարկեն նոր ծառայություններ հետևյալ ոլորտում գործող փոքր և միջին ձեռնարկությունների համար՝**

- *Գյուղատնտեսություն (բացառությամբ առաջնայինից)*
- *Արդյունաբերություն*
- *Զբոսաշրջություն և հյուրընկալություն*

Թիրախային խումբ՝ ՓՄՁ-ներին աջակցող կազմակերպություններ, ոլորտային միություններ ու ասոցիացիաներ, նորարարական և հետազոտական կենտրոններ, ինչպես նաև լիցենզավորված մասնագիտական ուսումնական հաստատություններ (արհեստագործական և միջին մասնագիտական) և հասարակական կազմակերպություններ:

4. Առաջնահերթություններ

Դիմորդների կողմից ներկայացված հայտադիմումում պետք է արտացոլվեն հետևյալ նպատակներից, սկզբունքներից և առաջնահերթություններից առնվազ մեկը.

- Հայտադիմումը համահունչ է R2D Սյունիք ծրագրի նպատակներին և աջակցում է նշված ոլորտներից որևէ մեկին՝ գյուղատնտեսություն /գյուղմթերքի վերամշակում (բացառությամբ առաջնային գյուղատնտեսությունը), արտադրություն (բացառությամբ վնասակար գործունեություն), զբոսաշրջություն և հյուրընկալություն:
- Հայտադիմումն առաջարկում է արդյունավետ և մատչելի ծառայություններ միկրո, փոքր, միջին ձեռնարկություններին Սյունիքի մարզում:

- Հայտադիմումը ներկայացնում է նոր կամ արդիականացված, գիտելիքներ և տեխնոլոգիաներ, որոնք համապատասխանում են Սյունիքի մասնավոր հատվածի ներկայիս պահանջներին:
- Հայտադիմումն առաջարկում է նախաձեռնություններ, որոնք կարող են ընդլայնվել կամ կրկնօրինակվել այլ համայնքներում:
- Դիմորդը ներկայացնում է, թե ինչպես իր նախաձեռնությունները կաջակցեն մարզի տնտեսական աճին և կապահովեն շարունակականություն:
- Հայտադիմումը ներառում է նորարար գաղափարներ, որոնք լուծում են արդի մարտահրավերներ և ադապտացվում փոփոխվող շուկայի պայմաններին:

5. Համապատասխանության չափանիշներ

Դիմորդները պետք է բավարարեն հետևյալ նվազագույն պահանջները՝

- Պետք է լինի ՀՀ -ում գրանցված իրաբանական անձ (օրինակ՝ ՀԿ, հիմնադրամ, Ա/Ձ, ՍՊԸ, ՓԲԸ, ՀԿ, որոնք տրամադրում են ձեռներեցության աջակցման ծառայություններ, խորհրդատվություն, դասընթացներ, ուսումնասիրություններ, մասնագիտական կրթություն):
- Պետք է ունենան առնվազն 3 (երեք) տարվա գործունեության փորձ նշված երեք որոլտներից որևէ մեկում:
- Պետք է տրամադրեն տեղեկատվություն իրենց նախորդ ծրագրերի վերաբերյալ, որոնք կապված են նշված նախաձեռնության հետ, օրինակ՝ նմանատիպ նախագծեր, համագործակցություններ կամ ծառայություններ:
- Պետք է ներկայացնեն հստակ ծրագիր Սյունիքի մարզում գործունեություն ընդլայնելու համար: Սա ներառում է ռազմավարական տեսլական և գործողությունների պլան՝ Սյունիքում ծրագրի շարունանկականության վերաբերյալ:
- Պետք է ունենան դասընթացների համար նախատեսված համապատասխան տարածք Սյունիքում, առնվազն 3 և ավել տարիների համար երկարաժամկետ վարձակալության կամ սեփականության իրավունքով:
- Պետք է ունենան որակավորված անձնակազմ՝ համապատասխան փորձով առաջարկվող նախագծի իրականացման համար:

Ծրագիրն իրեն իրավունք է վերապահում անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկություններ պահանջել հարկային ծառայություններից և այլ համապատասխան մարմիններից:

6. Ընդհանուր պահանջներ և չափորոշիչներ

<u>Ո՞վ կարող է դիմել</u>

- **Բիզնեսի աջակցման կազմակերպություններ**՝ կազմակերպություններ և ընկերություններ, որոնք մատուցում են վերապատրաստման և բիզնես խորհրդատվական ծառայություններ,
- **Մասնագիտական կրթական հաստատություններ (ՄԿՈՒ)՝** պետական և մասնավոր արհեստագործական և մասնագիտական ուսումնական հաստատություններ,

- **Ոլորտային ասոցիացիաներ և միություններ՝** կազմակերպություններ, որոնք ներկայացնում են տաբեր ոլորտներ և իրականացնում են այդ ոլորտների զարգացմանն ուղղված գործունեություն,
- **Հետազոտական և նորարարական կենտրոններ,**
- **Ոչ առևտրային կազմակերպություններ (ՀԿ)՝** կազմակերպություններ, որոնք իրականացնում են տնտեսական աջակցման ծրագրեր ուղղված խոցելի և հատուկ խմբերի (օրինակ՝ կանանց, երիտասարդների, տեղահանվածների) կարողությունների և հմտությունների բարձրացմանը,
- **Պետության կողմից արտոնագրված/լիցենզավորած ուսումնական հաստատություններ**:

7. Դիմելու գործընթացի քայլերի հաջորդականություն

Հայտադիմումների հավաքագրման և գնահատման գործընթացը կազմակերպվում է թափանցիկ և անաչառ սկզբունքներով: R2D Սյունիք ծրագիրը կիրականացնի մեկփուլային գնահատման գործընթաց, որի ընթացքում յուրաքանչյուր դիմորդ իրավունք ունի ներկայացնել միայն մեկ հայտ: **Հայտադիմումը պետք է լրացվի, տպվի, ստորագրվի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի և հավելվածների հետ միասին PDF ֆորմատով ուղարկվի նշված էլեկտրոնային փոստի հասցեին:** Նաև տպագիր տարբերակը պետք է ներկայացվի R2D Սյունիք ծրագրի գրասենյակներից որև է մեկը Սյունիքում կամ Երևանում:

Մրցույթի գործընթացի հիմնական փուլերը՝

1. **Հայտարարություն՝** հայտադիմումների ընդունման հրավերը կհրապարակվի և կտարածվի տարբեր հարթակներով (R2D Սյունիք ծրագրի կայք, տեղական ինքնակառավարման մարմինների կայք, սոցիալական մեդիա հարթակներ)՝ առավել լայն լսարանի հասանելի լինելու համար:

2. **Տեղեկատվական հանդիպում՝** R2D Սյունիք ծրագրի թիմի կողմից կկազմակերպվի առցանց հանդիպում-քննարկումներ, որոնց ընթացքում կքննարկվեն գործընթացի հետ կապված հարցեր: Առցանց հանդիպումների տեսաձայնագրությունները, այլ համապատասխան նյութերի հետ միասին, հասանելի կլինեն R2D Սյունիք ծրագրի կայքում:

3. **Հայտադիմումների ներկայացում՝** դիմորդից պահանջվում է ներկայացնել համապարփակ հայտադիմում՝ ըստ հաստատված ձևի: Դիմումի փաթեթը պետք է ներառի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և ուղարկվի R2D Սյունիք ծրագրի էլ. փոստի հասցեին:

4. **Հայտադիմումների համապատասխանության ստուգում՝** հայտադիմումները ստանալուց հետո R2D Սյունիք ծրագրի թիմը կանցկացնի **համապատասխանության** ստուգում՝ համոզվելու համար, որ բոլոր պահանջվող փաստաթղթերը և հավելվածները ներառված են, և որ հայտադիմումները համապատասխանում են հիմնական չափանիշներին: Ցանկացած թերի կամ չհամապատասխանող հայտադիմում այս փուլում կմերժվի:

5. **Հայտադիմումների գնահատում՝** համապատասխանության ստուգումն անցած հայտադիմումները կուղարկվեն Գնահատող հանձնաժողովին, որըհիմնվելով նախապես

սահմանված որակական չափանիշների վրա, կգնահատի դրանք: Գնահատող հանձնաժողովի կողմից շնորհված միավորների հիման վրա կկայացվի ընտրության վերջնական որոշում: Գնահատման հանձնաժողովի կողմից տրված միավորների հիման վրա, առնվազն 75 միավոր (նվազագույն շեմ) հավաքած հայտադիմումները կհամարվեն անցողիկ: Նվազագույն շեմը հաղթահարած հայտադիմումներից ամենաբարձր միավոր ստացած կազմակերպությունները կճանաչվեն որպես հնարավոր շահառուներ:

Ընտրված կազմակերպությունները հետագա քայլերի վերաբերյալ կտեղեկացվեն էլեկտրոնային փոստի միջոցով:

Այն դիմորդները, ում հայտադիմումները չեն ընտրվել, նույնպես կտեղեկացվեն էլեկտրոնային փոստի միջոցով:

Հայտադիմումների գնահատման որակական չափանիշներ՝

Համապատասխանություն

- **1.1 Հայտադիմումի՝ R2D ծրագրի նպատակների հետ համահունչ լինելը (5 միավոր)**
  Հասկանալի է արդյո՞ք, որ հայտադիմումը համահունչ է R2D Սյունիք ծրագրի նպատակներին՝ ներկայացնում է նորարարական ծառայություններ, տեխնոլոգիաներ կամ կարողությունների զարգացման նախաձեռնություններ, որոնք կխթանեն տեղական շուկայի զարգացմանը և տնտեսության դիմակայունությանը:
- **1.2 Շուկայում պահանջարկի հիմնավորում (10 միավոր)**
  Հայտադիմումում հստակ նշվա՞ծ են շուկայի բացերը կամ հմտությունների պակասը, և արդյո՞ք ներկայացված է փաստարկված պահանջարկ Սյունիքում:
- **1.3 Ներգրավվածություն և սոցիալական ազդեցություն (10 միավոր)**
  Արդյո՞ք առաջարկվող ծրագիրն իրապես աջակցում է կանանց, երիտասարդներին և խոցելի այլ խմբերին՝ ապահովելով նրանց հասանելիությունը աշխատանքային և տնտեսական հնարավորություններին:

Արդյունավետություն և իրագործելիություն

- **2.1 Իրագործման իրատեսություն (5 միավոր)**
  Արդյո՞ք ծրագրի գործողությունների պլանը հստակ է, կառուցվածքային և իրատեսական՝ կարողությունների զարգացման, վերապատրաստման կամ բիզնեսի աջակցության ծառայություններ տրամադրելու համար:
- **2.2 Կազմակերպական և գործընկերներային կարողություն (10 միավոր)**
  Արդյո՞ք դիմորդն ունիբավարար փորձ, մասնագիտական թիմ, ռեսուրսներ և գործընկերներ ծրագրի հաջող իրագործումը ապահովելու համար:
- **2.3 Աջակցության արդյունավետ օգտագործում (10 միավոր)**
  Կազմակերպությունն ունա՞կ է տրամադրվող ոչ ֆինանսական աջակցությունը ճիշտ ու նպատակային օգտագործելու տեսանելի արդյունք ապահովելու համար:

Ազդեցություն և կայունություն

- **3.1 Տնտեսական արդյունք (5 միավոր)**
  Արդյո՞ք ծրագիրը նպաստում է տեղական տնտեսության աճին՝ օգուտ բերելով ՄՓՄՁ-ներին, մատակարարներին կամ ծառայություն մատուցողներին Սյունիքում:
- **3.2 Աշխատատեղերի ստեղծում և սոցիալական ազդեցություն (10 միավոր)**
  Արդյո՞ք ծրագրի իրագործվելուց հետո Սյունիքում կստեղծվեն նոր աշխատատեղեր և կստեղծվեն հնարավորություններ, հատկապես խոցելի խմբերի համար:
- **3.3 Կայունություն և ընդլայնման հնարավորություն (10 միավոր)**
  Հայտադիմումում ներկայացվա՞ծ է հստակ տեսլական, թե ինչպես են նախաձեռնությունները շարունակվելու ծրագրից հետո և արդյո՞ք դրանք կարող են կրկնօրինակվել այլ համայնքներում:

Ֆինանսական կայունություն

- **4.1 Ֆինանսական պլանավորում և բյուջետավորում**
  Արդյո՞ք ֆինանսական պլանը կառուցված է հստակ ութափանցիկ և համընկնում է ծրագրի գործունեությունների հետ: (5 միավոր)
- **4.2 Հիմնավորվածություն և ծախսարդյունավետություն**
  Արդյո՞ք բյուջետային հաշվարկները բավարար չափով հիմնավորված են, ծախսարդյունավետ և իրագործելի՝ առաջարկվող աշխատանքների ծավալների համար: (10 միավոր)
- **4.3 Ֆինանսական կայունություն և համաֆինանսավորման կարողություն**
  Արդյո՞ք դիմորդը ցուցաբերում է ֆինանսական կայունություն և ունի՞ համաֆինանսավորելու հնարավորություն՝ նվազագույնը ընդհանուր ներդրման 20%-ի չափով: (10 միավոր)

6. Ընտրության ծանուցում և պայմանագրի կնքում՝ հաղթող դիմորդներին կուղարկվի ծանուցում: Յուրաքանչյուր շահառուի հետ կկնքվի պայմանագիր, որում կամրագրվեն աջակցության շրջանակը, ժամկետները, հաշվետվողականության պահանջները, ֆինանսական ներդրումների վերաբերյալ կողմերի պարտականությունները:

7. Պայմանագրի կնքում և հանձնում-ընդունում. Սարքավորումների, ապրանքների, տեխնոլոգիաների, ծառայությունների և ծրագրային ապահովման ձեռքբերումից հետո դրանք կփոխանցվեն շահառուին: Աջակցության օգտագործման ձևը հստակ կսահմանվի R2D Syunik ծրագրի և շահառուի միջև կնքվող պայմանագրով՝ ապահովելով, որ աջակցությունն օգտագործվի հաստատված հայտում նշված կարիքների համաձայն: Կկնքվի հանձման ակտ, որը կներառի տրամադրված միջոցների օգտագործման և պահպանման պայմանները: Հանձնումից հետո ձեռքբերված միջոցները կդառնան շահառուի սեփականությունը, և նա կպարտավորվի կատարել պայմանագրով սահմանված պահանջները:

8. Աջակցության նկարագրությունը և սահմանափակումները

Ծրագիրը տվյալ մրցույթի շրջանակում կտրամադրի աջակցություն միայն գնումների միջոցով՝ սարքավորումների, տեխնոլոգիաների և ծառայությունների տեսքով:

Աջակցության նկարագրություն՝

- **Աջակցության առավելագույն գումարը՝** մինչև **30,000 եվրո**:

- **Բազմակի հայտադիմումների ներկայացում.** Կազմակերպությունը կարող է ներկայացնել ներդրումային ծրագիր յուրաքանչյուր հայտերի ընդունման փուլում, եթե այն համապատասխանում է R2D Սյունիք ծրագրի նպատակներին: Եթե կազմակերպությունը հաջողությամբ ավարտել է նախորդ ծրագիրը և այն կարելի է կիրառել այլ համայնքներում, կամ առաջացել են նոր շուկայի պահանջներ կամ խնդիրներ, կազմակերպությունը կարող է դիմել նոր հայտով հաջորդ փուլերում: (Ընդհանուր նախատեսվում է մեկնարկելմինչև 10 ծրագիր):)**Ծրագրի համաֆինանսավորման մասնաբաժին՝** R2D Սյունիք ծրագիրը կարող է ֆինանսավորել հայտատուի ընդհանուր ներդրման **մինչև 80%-ը**:

Այնուամենայնիվ, R2D Սյունիք ծրագրի կողմից ֆինանսավորվող մասը պետք է ներառի այնպիսի սարքավորումներ, ապրանքներ, տեխնոլոգիաներ, ծառայություններ և ծրագրային ապահովում, որոնք կլինեն առանձնացված դիմորդի սեփական ներդրումներից ու գնումներից և չեն կրկնվի դրանց հետ: Այդ տարբերակումը պետք է հստակ ներկայացվի հայտադիմումում՝ հատուկ աղյուսակում, որտեղ նշված կլինեն կազմակերպության կարիքները, դրանց քանակը և համապատասխան արժեքները:

Այս սարքավորումների գնումներն ուղղակիորեն կիրականացվեն R2D Սյունիք ծրագրի կողմից: ԱԶԳ-ն պատասխանատու կլինի մրցույթի համար և պայմանագիր կկնքի ընտրված մատակարարի հետ:

9. Առաջարկվող ծրագրի/նախաձեռնության պահանջներ

Աջակցության համար ներկայացված ծրագիրը պետք է համապատասխան լինի այս հիմնական չափանիշներին.

1. **Տարածքային ընդգրկում՝** նախաձեռնությունը պետք է իրականացվի բացառապես Սյունիքի մարզում:
2. **Մատչելիություն և հասանելիություն՝** առաջարկվող ծառայությունները պետք է նախագծված լինեն ներառելու նաև սոցիալապես խոցելի խմբերը՝ ապահովելով նրանց հնարավորինս հեշտ և մատչելի ներգրավվածություն
3. **Շարունակականություն՝** նախաձեռնությունը պետք է նախատեսված լինի առնվազն **5 տարվա շարունակական գործունեության** համար Սյունիքում՝ սկսած պայմանագրի ստորագրման օրվանից:

10. Աջակցության շրջանակը

R2D Սյունիք ծրագիրի կողմից աջակցությունը տրամադրվելու է բացառապես գնման գործընթացի միջոցով՝ ձեռք բերելով սարքավորումներ, գործիքներ, տեխնոլոգիաներ, ծառայություններ և ծրագրային ապահովում: Այս ձևաչափը նպատակ ունի աջակցել այն կազմակերպություններին, որոնք պլանավորում են երկարաժամկետ գործունեություն ծավալել Սյունիքի մարզում և զարգացնել իրենց ծառայությունները:

Տեխնիկական աջակցության տեսակները

Աջակցությունը տրամադրվում է տեխնիկական բաղադրիչներով, որոնք կարող են ներառել (բայց չեն սահմանափակվում միայն) հետևյալ ուղղություններով.

1. **Նոր գիտելիքի, տեխնոլոգիաների և մասնագիտությունների ներդրում**
   Աջակցություն՝ շուկայի կարիքներին համահունչ նոր ուսումնական ծրագրերի, մեթոդների, դասընթացների և պահանջարկ ունեցող մասնագիտությունների մշակման և ներդրման համար:
2. **Սարքավորումների, գործիքների, տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման ձեռքբերում կամ արդիականացում**
   Բարձր որակով վերապատրաստում և բիզնեսի զարգացում ապահովելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի համալրում:
3. **Լաբորատորիաների, արհեստանոցների և լսարանների կահավորում կամ բարելավում**
   Ուսումնական ենթակառուցվածքների ձևավորում՝ մասնավորապես շուկայի համապատասխան ոլորտների համար, օրինակ՝ կանաչ ինժեներիա, ագրոմշակություն և այլ մասնագիտություններ:
4. **Մասնաճյուղերի ստեղծում կամ հաջողված կրթական մոդելների կրկնօրինակում**
   Աջակցություն՝ արդեն գործող և արդյունավետ կրթական ծրագրերի տարածման և ընդլայնման համար Սյունիքի մարզի տարբեր համայնքներում:
5. **Բիզնեսի զարգացման ծառայությունների ներդրում և մատուցում**
   Ծառայությունների զարգացում, որոնք աջակցում են տեղական բիզնեսներին աճի և մրցունակության բարելավման գործընթացում՝ շուկայի պահանջներին համահունչ:
6. **Բիզնես ծառայությունների մատուցում**
   Ծառայություններ, ինչպիսիք են ֆինանսական կառավարում, մարքեթինգ, մատակարարման շղթայի օպտիմալացում և այլ գործառույթներ՝ ուղղված տեղական ձեռնարկությունների արդյունավետության բարձրացմանը:

Նշում. կարող են առաջարկվել նաև աջակցության այլ ձևեր, եթե դրանք նպաստում են ծրագրով սահմանված արդյունքների և նպատակների իրագործմանը Սյունիքի մարզի ընտրված շուկայական համակարգերում:

Ոչ ընդունելի ծախսեր՝
• Օգտագործված / երկրորդական սարքավորումների, ապարատային միջոցների, գործիքների, կահույքի և այլնի գնումը,

• Հումքի գնումը,
• Շինարարական և վերանորոգման ծառայությունների գնումը,
• Այլ շրջանառու կապիտալի ծախսեր:

Բացառման ցանկ՝ ԱՁԳ-ի բացառման ցանկը սահմանում է ծրագրերի և նախագծերի տեսակները, որոնք ԱՁԳ-ն չի իրականացնում կամ ֆինանսավորում: Սա վերաբերում է ցանկացած ծրագրի կամ նախագծի, որը ներառում է գործունեություն, արտադրություն, օգտագործում, բաշխում, բիզնես կամ առևտուր, որը ներառում է հետևյալը՝

1. Հարկադիր աշխատանք կամ մանկական աշխատանք
2. Պոռնոգրաֆիա և/կամ մարմնավաճառություն,
3. Ռասիստական, սեքսիստական և/կամ հակադեմոկրատական լրատվամիջոցներ,
4. Զենքի և զինամթերքի արտադրություն, առևտուր կամ բաշխում,
5. Մշակութային ժառանգության ապամոնտաժում և/կամ վնասում,
6. Մարդկանց (այսինքն՝ ընտանիքներ, տնային տնտեսություններ, համայնքներ) բռնի վտարումներ և/կամ տեղահանումներ,
7. Հողամասերի լայնածավալ ձեռքբերում (հողազավթում),
8. Արտադրությունը, արդյունաբերությունը, գործունեությունը և նյութերը, որոնք համարվում են անօրինական՝ համաձայն ընդունող երկրի օրենսդրության կամ կանոնակարգի կամ միջազգային կոնվենցիաների ու համաձայնագրերի, կամ ենթակա են միջազգային փուլային դադարեցման կամ արգելքի՝ կենդանի օրգանիզմների համար բարձր թունավորմանը, շրջակա միջավայրի կայունության, կենսակուտակման ներուժի, կամ օզոնային շերտի քայքայմանը նպաստելու պատճառով, ինչպիսիք են.
    - Օզոնը քայքայող նյութեր, պոլիքլորացված բիֆենիլներ (պոլիքլորացված բիֆենիլներ) և այլ հատուկ, վտանգավոր քիմիական նյութեր, թունաքիմիկատներ, որոնք պատկանում են ԱՀԿ-ի Պեստիցիդների առաջարկված դասակարգմանը 33 ըստ Ia (չափազանց վտանգավոր) կամ Ib (խիստ վտանգավոր) դասակարգման,
    - Ցանկացած տեսակի ասբեստի մանրաթելեր,
    - ԿՕԱ-ների (Կայուն օրգանական աղտոտիչների մասին) Ստոկհոլմի կոնվենցիայի Հավելված Ա-ում կամ Բ-ում թվարկված բոլոր քիմիական նյութերը,
    - կապար (բացառությամբ մեքենաների մարտկոցների և միջուկային դեղամիջոցների), կադմիում, մկնդեղ (բացառությամբ բժշկական դեղերի) կամ սնդիկ պարունակող իրեր,
    - ռադիոակտիվ նյութ (բացառությամբ միջուկային բժշկության):

9. Թափոնների և թափոնային ապրանքների միջսահմանային առևտուր, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք համապատասխանում են Բազելի կոնվենցիային և դրա հիմքում ընկած կանոնակարգերին,
10. Էկոհամակարգերին և կենսաբազմազանությանը հասցված վնաս, ինչպիսիք են՝

- Պահպանության բարձր արժեք ունեցող տարածքների ոչնչացումը,Վայրի բնություն կամ ապրանքներ, որոնք կարգավորվում են Վտանգված տեսակների կամ վայրի ֆաունայի և ֆլորայի միջազգային առևտրի մասին կոնվենցիայով (CITES); կամ Ձկնորսության անկայուն մեթոդներ (օրինակ՝ պայթուցիկ ձկնորսություն և ցրված ցանցով ձկնորսություն ծովային միջավայրում՝ 2,5 կմ-ից ավել երկարությամբ ցանցերի օգտագործմամբ):

Այս համատեքստում ԱԶԳ-ն ձեռնպահ է մնում էկոհամակարգի կամ կենսաբազմազանության փոխհատուցման մեխանիզմից:

11. Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՁՕ) ներմուծում կամ խթանում. ինվազիվ այլմոլորակային տեսակներ, ինչպես նաև համակարգեր և/կամ սարքեր սինթետիկ կենսաբանության սպեկտրում:
12. Շրջակա միջավայր և/կամ կլիմայական վնաս պատճառող գործողություններ, ինչպիսիք են ծրագրերը, նախագծերը և գործարար գործընկերությունները
    - Ակնկալվում է, որ ներկայումս կարտադրվի տարեկան ավելի քան 20,000 տոննա CO2-ի համարժեք:
    - Դա ուղղակիորեն նպաստում է էներգիայի բարձր ածխածնային ձևերին (հատկապես ածուխ կամ նավթ)

Դիմումի ներկայացման ընդհանուր պահանջներ

<u>Դիմորդ կազմակերպությունը պետք է ներկայացնի հայտադիմում, որը կներառի հետևյալ հիմնական տեղեկատվությունը՝</u>

- Կազմակերպության համառոտ նկարագրությունը, ներառյալ փորձառությունը,
- Հայտադիմումի նպատակներն ու խնդիրները,
- Նախաձեռնության մանրամասն նկարագրությունը, ներառյալ գործողությունների ծրագիրը և հիմնական փուլերը,
- Շահառուների և շահագրգիռ կողմերի նկարագրությունը,
- Ակնկալվող արդյունքները,
- Նախաձեռնությունը հաջող իրականացնելու համար անհրաժեշտ կարողությունների հիմնավորումը, ներառյալ կազմակերպության փորձը, ռեսուրսները և անհրաժեշտ մասնագիտական ներուժը,
- Ընդհանուր պահանջվող ներդրումը, ներառյալ աղյուսակ՝ ծախսային հոդվածներով, տեխնիկական նկարագրություններով, քանակներով և մոտավոր արժեքներով,
- R2D Սյունիք ծրագրից ակնկալվող աջակցությունը,
- Իրականացման առաջարկվող ժամանակացույցը:

11. Դիմելու գործընթաց

Բոլոր հետաքրքրված կազմակերպությունները պետք է լրացնեն հայտադիմումի ձևը, որը հասանելի է R2D Սյունիք ծրագրի պաշտոնական կայքում՝ https://www.r2dsyunik.am/hy/news/publications

Հայտադիմումի ձևը հասանելի է նաև հետևյալ հասցեներում՝

- **Երևան** – Վ. Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա», 6-րդ հարկ, սենյակ 604, 605

- **Կապան** – Արամ Մանուկյան 5/37
- **Սիսիան** – Արամ Մանուկյան 2
- **R2D Սյունիք ծրագրի ֆեյսբուքյան էջում՝** https://www.facebook.com/R2DSyunik
- **Էլ. փոստ՝** r2dsyunik@ada.gv.at

Դիմող կազմակերպությունները պետք է ներկայացնեն **լիարժեք լրացված, կնքված և ստորագրված հայտադիմումը՝** բոլոր պահանջվող հավելվածներով, էլեկտրոնային տարբերակով, հայերեն լեզվով՝ ուղարկելով **r2dsyunik@ada.gv.at** հասցեին: Թեմա (Subject) տողում խնդրում ենք նշել՝ **"Application Form"**:

Հարցերի ներկայացում. Այս հրավերին վերաբերող հարցերը կարող են ուղարկվել գրավոր՝ մինչև **2026թ., ապրիլի 17-ը, ժամը 18:00** (Երևանի ժամանակով), նույն էլ. հասցեին: Բոլոր հարցերին կտրվեն պարզաբանումներ 7 օրվա ընթացքում:

Վերջնաժամկետ՝ հայտադիմումների ներկայացման վերջնաժամկետն է **27 ապրիլի 2026թ., ժամը 18:00**: Ձեռագիր լրացված կամ վերջնաժամկետից հետո ուղարկված հայտադիմումները չեն դիտարկվի:

---

1. **Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**

   Դիմորդ կազմակերպությունները իրենց հայտադիմումի հետ միասին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը:

1. **Կազմակերպության փաստաթղթեր՝** պետ. ռեգիստրի վկայական, այլ հիմնադիր փաստաթղթեր:
2. **Փորձի վերաբերյալ տեղեկություն՝**փաստաթղթեր, որոնք վկայում են դիմորդի գործունեության փորձի և առնվազն 3 (երեք) տարվա անընդմեջ գործունեության մասին:
3. **Ռեզյումեներ (CV-ներ)՝** ծրագրում ներգրավված հիմնական աշխատակիցների ինքնակենսագրականները՝ ընդգծելով նրանց որակավորումները, համապատասխան փորձը և ծրագրում նրանց դերը:
4. **Գույքի նկատմամբ սեփականության կամ վարձակալության փաստաթղթեր՝** վկայականներ, պայմանագրեր կամ այլ փաստաթղթեր, որոնք ապացուցում են ծրագրի իրականացման համար համապատասխան տարածքի (օր.՝ հող, շենքեր) սեփականության կամ երկարաժամկետ վարձակալության իրավունքը Սյունիքի մարզում:
5. **Այլ փաստաթղթեր՝** լրացուցիչ փաստաթղթեր՝ ըստ պահանջի: